րած, որ պատերը հարթ հաւասար, առանց սիւների, բարձրանում են, վերևը կազմում են ուսակամարներ, որոնց վերայ գմբէթը բարձրանում է և վերջանում է լուսամուտով: Ուր պէտք է լինէր խաչն, այնտեղ ներս է թափանցում երկնային լոյսը: Մի լուսամուտ ևս բացած է դռան վերը, դէպի արևմուտ: Պատերի վերայ փորագրած են խաչեր: Իսկ արևելեան պատի մէջ փորած է կամարակապ փոքրիկ սեղան համաչափ վէմ քարով՝ նոյնպէս փորած: Երեք աստիճանով մի մարդ բարձրացած՝ հազիւ կարող է զետեղուել սեղանի վերայ:

Յատակում շարուած են երեք կարգ տափակ տապանաքարեր, ընդամենը տասնեմէկ հատ, բայց հողի տակ ծածկուած, որով դժուարութիւն է յառաջ գալի, թէ կա՞յ արդեօք նորանց վերայ արձանագրութիւն: Սորա հարաւային պատի մէջ մի դուռն տանում է անմիջապէս միւս վիմափոր եկեղեցին:

Վերջինս ունի եօթը քայլ լայնութիւն և մինչև բեմը վեց քայլ երկարութիւն: Զորս որմնակից սիւների վերայ բազմած գմբէթը վերջանում է լուսամուտով: Բեմը բաւականին լայն է, հարաւային և հիւսիսային պատում մի մի փոքրիկ պատուհան ունենալով սկիհը հանգուցանելու համար: Երկու աստիճանով են բարձրանում բեմ: Վէմ քարը ուռանձնակի է: Երևում է որ ժամասացութեան համար յարմարն և գործադրելին սա է եղել իւր ժամանակին: Սա ունի մի այլ դուռն արևմտեան պատում դէպի լոյս աշխարհ, բայց նա պատով բոլորովին փակած է: Նորա վերը երևումէ մի լուսամուտ:

(Շարունակելի) Քաջբերունի

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՔԱՂՈՒԱԾՔ ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԳԻՍ.

Կոնդակ օրհնութեան Վ.Հ. Հայրապետի ազգիս յանուն եղբարց Ալիխանեանց յ9ն յունուարի ընդ համարաւ 11, որով հաստատէ

գնոսա ի պաշտօն պատուաւոր Հոգաբարձուի նոքօք կառուցեալ եկեղ. ծխական տղայոց ուսումնարանին Հայոց Գօրի քաղաքի:

—

Կոնդակ Վ.Եհ. Հայրապետի ազգիս յանուն Գեր. Փոխանորդի Թեմակալի Հայոց երևանայ ի 15 յունուարի ընդ համարաւ 25, որով հաստատէ ի պաշտօն Հոգաբարձութեան եկեղ. ծխական տղայոց ուսումնարանին Հայոց Թմբուլ գեղջ ի տեղի հանդուցեալ Թադէոսի Մուրատեանց զպարոն Կարապետն Օհանեան. իսկ յանձնափոխանորդ նորին զպարոն Ստեփանն Օրդուխանեան:

—

Կոնդակ Վ.Եհ. Հայրապետի ազգիս յանուն նորին ի նոյն թիւ ընդ համարաւ 26, որով թոյլատրէ նմա բանալ ի Համզաչիման գեղջ Աղեքսանդրապոլու գաւառի զմիդասեան եկեղեցական ծխական ուսումնարան:

ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՈԴԻ.

22 Նոյեմ. Բարեհաճութեամբ նորին Վեհափառութեան Ս. Սինոդը նշանակեց Կարսի նախկին յաջորդ բարեշնորհ Յուսիկ վարդապետ Մովսէսեանին՝ Տփխիսու Ս. Սարգիս վանքի վանահայր և Կոնսիստորիայի նախանդամ: Իսկ բարեշնորհ Յովհաննէս վարդապետ Շիրակունուն՝ նշանակեց յաջորդ Ախալցխայի:

—

12 Դեկտ. Բարեհաճութեամբ նորին Վեհափառութեան Ս. Սինոդը նշանակեց Մայր Աթոռոյս միաբան բարեշնորհ Աշոտ արեղայ Նախեանին՝ Տպարանական ժողովոյ անդամ, որ այս տարուայ Յունուար ամսի 1-ից ստանձնեց իւր այդ նոր պաշտօնը:

—

27 Դեկ. Ճեմարանի նախկին ուսուցիչ պ. Մկրտիչ Պալեան իւր ընտանիքով՝ թողնելով կաթոլիկութիւնը, յօժարակամ ցանկութեամբ մտան Հայաստանեայցս Ս. Եկեղեցու ծոցը: